ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՎ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ՕՈՒԼՈՒԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿ և ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ» ԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

«Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը (ՀՊՄՀ) 2011 թվականի օգոստոս ամսից սկսել է համագործակցություն Ֆինլանդիայի Օուլուի համալսարանի հետ: Համագործակցության նպատակն է բարեփոխել բարձրագույն մանկավարժական կրթությունը Հայաստանում Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի առաջնորդությամբ:

Համագործակցության շրջանակներում ՀՊՄՀ-ում բարեփոխումներն իրականացվում են հետևյալ ուղղություններով.

- Ուսուցիչների որակավորման աստիճանների և ուսումնական կրեդիտների ներդրման, ըստ մասնագիտությունների կրթական ծրագրերի, և գնահատման համակարգերի մշակման ու հաստատման ուսումնամեթոդական, դասավանդման և ուսուցման մեթոդների համալիրի բարելավում և կատարելագործում;
- Ինստիտուցիոնալ և ծրագրային մակարդակներում որակի ապահովման ընթացակարգերի և գործընթացների ներդրում;
- Ուսանողների հետագիծը ուսումնասիրելու և ուսանողների հետագա աշխատանքում աջակցելու նպատակով Կարիերայի կենտրոնի հիմնարար ընթացակարգերի մշակում և ներդրում;
- ՀՊՄՀ-ի կառավարման արդիականացում բուհի բոլոր օղակներում՝ ժամանակակից կառավարման էթիկայի նորմերին համապատասխան;
- Ուսանողական պրակտիկայի բարելավում՝ ստեղծված դպրոցական ցանցերի օգտագործման միջոցով;

- Փորձի փոխանակման և համագործակցության սերտ կապերի հաստատման նպատակով ուսուցողական այցերի կազմակերպում;
- Մանկավարժական կրթության բնագավառում գիտական հետազոտություններ կատարելու և դրանց արդյունքները կիրառելու մանկավարժական բուհերի պրոֆեսորադասախոսական կազմի կարողությունների բարելավում՝ գիտահետազոտական աշխատանքներում ներգրավելով նաև ուսանողությանը:

Ֆինլանդիայի Օուլուի համալսարանի և ՀՊՄՀ-ի միջև համագործակցությունը հնարավորություն է ընձեռում ներդնել կրթական գործընթացի կազմակերպման նոր եվրոպական մշակույթ, ապահովել ՀՀ մանկավարժական կրթության մրցունակությունը եվրոպական մակարդակում, իրականացնել նոր համատեղ գիտահետազոտական ծրագրեր, որը ևս կնպաստի ՀՀ մանկավարժական կրթության բնագավառում գիտահետազոտական աշխատանքների արդյունքների տեղական կիրառմանը, բարձրացնել վերջինիս գրավչությունը և ապահովել միջազգայնացումը: